



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ  
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան

02/27/2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2  
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ <<Հանրապետություն>> խմբակցության անդամներ՝ Արեն Աղաջանյանը, Արամ Քոչարյանը

<<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամներ՝ Արամայիս Աղաբեկյանը, Լյուդմիլա Հովսեփյանը,

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**

<<Հանրապետություն>> խմբակցության անդամներ՝ Սուրեն Թումանյանը, Նիկալ Դալլաքյանը, Կարո Ղազարյանը, Ռոման Շաքարյանը, Դավիթ Վանյանը, Գոհարիկ Խաչիկյանը,

<<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամներ՝ Հովնան Բեգլարյանը, Սեդրակ Գալստյանը, Սվետլանա Եգանյանը, Նարեկ Հովհաննիսյանը, Հրանուշ Վանյանը,

**Ավագանու նիստին մասնակցում էին՝ ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյանը, ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Միեր Խեչումյանը, ՏԻ և ՀԳՄՀ Ավագ մասնագետ Արմեն Շահվերդյանը, վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցները և քնակիչներ.**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը**

Լսեցին

**ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ջեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը.

- 1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2023թ. փետրվարի 27-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
- 2) Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
- 3) Թումանյան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին
- 4) Թումանյան համայնքի համացանցային կայքում «ՏԻՄ-ԽԱՂԱ» առցանց տեղեկատվական, ուսուցողական հավելվածի տեղադրման մասին
- 5) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
- 6) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
- 7) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի 06-071-0126-0007 ծածկագրի 0.657 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին
- 8) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի 06-035-0200-0016 ծածկագրի 0.139 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
- 9) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում վազոն տնակ տեղադրելու և պտուղ բանջարեղենի առևտրային գործունեություն իրականացնելու մասին
- 10) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի նիստի օրը որոշելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ա/

Լսեցին

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1,2 հավելվածների:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7-Ա/

Լսեցին

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82.1-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ կետերով՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8-Ա/

Լսեցին

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ «ՏԻՄ-ԽԱՂԱ» ԱՌՑԱՆՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ՈՒՍՈՒՅՈՂԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի» 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 11-րդ հոդվածով և հիմք ընդունելով «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի ներկայացված դիմում-ատաջարկը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Թումանյան համայնքի համացանցային կայքում «ՏԻՄ-ԽԱՂԱ» տեղեկատվական, ուսուցողական առցանց խաղի տեղադրումը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշմամբ հաստատված «ՏԻՄ-ԽԱՂԱ» առցանց տեղեկատվական, ուսուցողական հարթակը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9-Ա/

Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի

1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հոդերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով << վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հոդերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.08.2022թ.թիվ 119 դրական եզրակացությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Ռուդիկ Երիբեկի Եգանյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերից 06-035-0114-0064 կադաստրային ծածկագրի 0.1293 հա վարելահողը փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2. Առաջարկել Ռուդիկ Երիբեկի Եգանյանին համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 218633,37 (երկու հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր երեսուներեք դրամ երեսունյոթ լումա) ) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

4. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 02.09.2022թ. N 70-Ա որոշումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ա/

Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒԹՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հոդերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով << վարչապետի 2001թ. օգոստոսի

13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 04.07.2022թ.թիվ 95 դրական եզրակացությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Հրանտ Սպարտակի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերից 06-035-0105-001 կադաստրային ծածկագրով 0.98104 հա և 06-035-0109-0001 կադաստրային ծածկագրով 0.971856 հա խոտհարքները փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2.Առաջարկել Հրանտ Սպարտակի Սահակյանին համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 5 538 413,056 (հինգ միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար չորս հարյուր տասներեք դրամ հիսուն վեց լումա) ՀՀ դրամ:

3.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

4.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 02.09.2022թ. 71-Ա որոշումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
06-071-0126-0007 ԾԱԾԿԱԳՐԻ 0.657 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՌԻՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ/*

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, 66-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Մարց գյուղի գյուղապետարանի և Ալբերտ Մուսայի Վարդանյանի միջև 03.11.2005 թվականին կնքված հողամասի /խոտհարք/ 25 տարի ժամկետով վարձակալության 1436 պայմանագիրը, դրա հիման վրա տրամադրված հողամասի վարձակալության իրավունքի թիվ 0103075 վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով

Ալբերտ Մուսայի Վարդանյանին տրամադրված 06-071-0126-0007 ծածկագրով 0.657 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողատեսքը օտարելուն:

2. Հաշվի առնելով, որ հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է Ալբերտ Մուսայի Վարդանյանին և վարձակալը ունի գնման նախապատվություն՝ 06-071-0126-0007 ծածկագրով 0.657 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողատեսքը 550000 ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել Ալբերտ Մուսայի Վարդանյանին:

3. Համայնքի ղեկավար Սուրեն Թումանյանին օրենքով սահմանված կարգով Ալբերտ Մուսայի Վարդանյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր և համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
06-035-0200-0016 ԾԱԾԿԱԳՐԻ 0.139 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5-րդ բաժնի պահանջներով՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0200-0016 ծածկագրի 0,139 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 1 300 000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՎԱԳՈՆ ՏՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊՏՈՒՂ-ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Թումանյան քաղաքի բնակիչ Հովիկ Սարգսի Մանուկյանի (24.02.2023թ. թիվ 88 մտից) դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Թումանյան քաղաքի բնակիչ՝ Հովիկ Սարգսի Մանուկյանին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի, 18-րդ փողոցի, հասարակական տրանսպորտի կանգառի հարակից տարածքի(ծած.՝06-004-0288-0003) 0,0035 հա մակերեսով հողամասում ժամանակավորապես (մինչև <-70 Հանրապետական նշանակության ճանապարհի վերանորոգման աշխատանքների սկսելը) վագոն տնակ տեղադրելու և առանց վարձավճարի պտու - բանջարեղենի առևտրային գործունեություն իրականացնելու համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի մարտի 31-ը, ժամը 11:00-ին:
2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Թումանյան, 3-րդ փողոց, Մշակույթի պալատ, շ.2:












Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ա/







Թումանյան համայնքի անազանու նիստին մասնակից ավագանու անդամներ

- Բեգլարյան Հովնան 
- Գալստյան Սեդրակ 
- Դավաթյան Նիկալ 
- Եգանյան Սվետլանա 
- Թումանյան Սուրեն 
- Խաչիկյան Գոհարիկ 
- Հովհաննիսյան Նարեկ 
- Ղազարյան Կարո 
- Շաքարյան Ռոման 
- Վանյան Դավիթ 
- Վանյան Հրանուշ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դիմագրի առջաձեռքընդ

ԱՐՇԻՐԱՏԱՆԻ ԱԿՑԻՆԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ 

ՌՈՒՋԱԿԵԱԿ ԸԿՆՎԵՐԴՅԱԿ

11/11/11